2024-2025թթ

Արձանագրություն 1

2025թվականի հունվարի 20-ին տեղի ունեցավ <<Արարատ քաղաքի Ժ.Մկրտչյանի անվան №1 հիմնական դպրոց>>, <<Արարատ քաղաքի Պ.Սնակի անվան №2 հիմնական դպրոց>>, <<Արարատ քաղաքի №3 հիմնական դպրոց>>, <<Արարատ քաղաքի №4 հիմնական դպրոց>>, <<Նոյակերտի միջնակարգ դպրոց>>, <<Լանջառի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ների միասնական կառավարման խորհրդի անդրանիկ նիստը: Նիստին ներկա էին 12 անդամ, բացակա 1-ը՝ Հովհաննես Ավետիսյանը:

Օրակարգում

- Միասնական կառավարման խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:
- Կառավարման խորհրդի աշխատակարգի հաստատում:
- Նոյակերտի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագրի 2023 թվականի հաշվետվության ներկայացում:

Ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի №1953-Ա/2 17.10.2024 թվականի հրամանի հաստատվել է ՀՀ ԿԳՄՄՆ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմը: Ստորև ներկայացվում է վերոնշյալ դպրոցների միասնական կառավարման խորհրդների կազմը:

Խորհրդի կազմում ընդգրկված դպրոցների անվանումը	ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի ներկայացուցիչներ	ՀՀ մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ	Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչներ	Ծնողական խորհրդի ներկայացուցիչներ
1.Ք.Արարատի Ժ.Մկրտչյանի անվան №1 հիմն. դպրոց 2.Ք.Արարատի Պ.Սնակի անվան №2 հիմ. դպրոց 3. Ք.Արարատի №3 հիմնական դպրոց 4. Ք.Արարատի №4 հիմնական դպրոց 5. Նոյակերտի միջնակարգ դպրոց 6. Լանջառի հիմնական դպրոց>>	1.Հովհաննես Նահապետյան	1.Ավետիսյան Հովհաննես 2.Հակոբյան Սուշեղ	1.Նուշիկ Գրիգորյան 2.Մկրտչյան Վարազ 3.Գալստյան Արսեն 4.Ստեփանյան Արտյոմ 5.Մնացականյան Քրիստինե	1.Մուրադյան Ալիսա 2.Կարապետյան Արփինե 3.Մակյան Սվետլանա 4.Ստեփանյան Ռիմա 5.Ստեփանյան Արփինե

Ըստ կանոնակարգի՝ առաջին նիստը պետք է վարի կառավարման խորհրդի ավագ անդամը: Պարզվեց,որ ներկաներից ավագը Հովհաննես Նահապետյանն է: Քանի որ կազմը նոր է ձևավորված, վերջինս առաջարկում է, որ խորհրդի բոլոր անդամները ներկայացնեն իրենց և իրենց աշխատանքային գործունեությունը, որն էլ մեծապես կօգնի խորհրդի նախագահի ընտրության հարցում: Ծանոթությունից հետո խորհրդի անդամները առաջադրում են իրենց նախընտրած թեկնածուներին: Առաջադրվում է 1 թեկնածու՝

Հովհաննես Նահապետյան

Քվեաթերթիկների վավերացման համար քվեաթերթիկների հակառակ կողմում ստորագրում են 3 խորհրդի անդամներ:
Տեղի է ունենում փակ,թափանցիկ քվեարկություն: Քվեատուփը բացելու և արդյունքները հաշվելու համար ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով՝

- Գալստյան Արսեն
- Գրիգորյան Նուշիկ
- Մկրտչյան Վարազ

Քվարկության արդյունքները հետևյալն են՝

Հովհաննես Նահապետյան Կողմ 12
Դեմ 0
Ձեռնպահ 0

Այսպիսով միասնական կառավարման խորհրդի նախագահ է ընտրվում Հովհաննես Նահապետյանը:
Քննարկման արդյունքում Նուշիկ Գրիգորյանը ընտրվում է խորհրդի քարտուղար:

Գործող կարգի համաձայն պետք է հաստատել կառավարման խորհրդի հետևյալ աշխատակարգը.
1.Խորհրդի հերթական նիստերը հրավիրել երեք ամիսը մեկ անգամ՝ յուրաքանչյուր երրորդ ամսվա վերջին շաբաթվա ուրբաթ օրը, յամը 15:30-ին:
2.Խորհրդի արտահերթ նիստերը հրավիրել գործող կարգի համաձայն:

Որոշվեց.

1.Հաստատել Հովհաննես Նահապետյանին՝ որպես միասնական կառավարման խորհրդի նախագահ, իսկ Նուշիկ Գրիգորյանին՝ քարտուղար,

2.Գործող կարգի համաձայն հաստատել կառավարման խորհրդի աշխատակարգը:

3.Խորհուրդը լսեց Նոյակերտի դպրոցի 2023-2024 ուս.տարվա հաշվետվությունը,հաստատության զարգացման ծրագրի կատարողականի վերաբերյալ:Տնօրենը ներկայացրեց կատարված աշխատանքները: Արտահայտվեց Հ.Նահապետյանը՝նշելով որ քանի դեռ դպրոցը չի անցել կառավարման նոր համակարգի ,ուստի հաշվետվությունը ներկայացվում է ոչ թե նոր ձևաչափով այլ նախկին ձևաչափով: Արտահայտվեցին Ն.Գրիգորյանը և Ա.Ստեփանյանը:

4.Միասնական կառավարման խորհուրդը առաջնորդվելով <<ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>>ՊՈԱԿ-ների օրինակելի կանոնադրության 33-րդ հոդվածի դրույթներով

Որոշվեց.

Նոյակերտի միջնակարգ դպրոցի 2023-2024 ուս.տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան հաշվետվությունը և հաստատության զարգացման ծրագրի կատարումը համարել բավարար:

Խորհրդի նախագահ՝ Հովհաննես Նահապետյան

Քարտուղար՝ Նուշիկ Գրիգորյան

Անդամներ՝ Հակոբյան Սուշեղ

Մուրադյան Ալիսա

Մկրտչյան Վարազ

Կարապետյան Արփինե

Գալստյան Արսեն

Մակյան Սվետլանա

Ստեփանյան Արտյոմ

Ստեփանյան Ռիմա

Մնացականյան Քրիստինե

Ստեփանյան Արմինե